ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՁԽԱՂԱՑՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՀԱՏՈՒԿ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Կարինե Քոչարյան

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հրատարակող
Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի հայաստանյան գրասենյակ

/freiheit.org
/FriedrichNaumannStiftungFreiheit
/FNFreiheit

Հեղինակ
Կարինե Քոչարյան

Խմբագիր
Մարիա Աբրահամյան

Կապ
Էլ. հասցե՝ service@freiheit.org

Հրապարակման տարեթիվ
10/2025

Կանանց քաղաքական առաջխաղացմանը նպաստող հատուկ ժամանակավոր միջոցները և դրանց կիրառելիության դիտարկումը Հայաստանում – Քոչարյան Կ., Երևան, 2025

Հետազոտությունն անդրադառնում է Հայաստանում կանանց քաղաքական մասնակցության խթանման հատուկ միջոցներին, մասնավորապես՝ օրենսդրական գենդերային քվոտաների բարելավմանը, կուսակցությունների ներսում կամավոր քվոտաների սահմանմանը և կանանց առաջխաղացմանն ուղղված պետական ֆինանսավորմանը: Հետազոտությունում նշվում է, որ քվոտաների աստիճանական բարձրացումը միջազգային փորձում նպաստում է կանանց ներկայացվածության բնականոն աճին, սակայն Հայաստանում այս հարցի շուրջ կարծիքները բազմազան են: Միևնույն ժամանակ այն ցույց է տալիս, որ հատուկ միջոցների կիրառման արդյունավետության կարելի է հասնել միայն այն դեպքում, երբ դրանք համադրվում են լայն գենդերային և հանրային քաղաքականության հետ:

Այս հրապարակումը հնարավոր է դարձել Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի աջակցությամբ: Գրքում տեղ գտած կարծիքներն ու դիրքորոշումները կարող են չհամընկնել Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի մոտեցումների հետ:

Նշումներ այս հրապարակման օգտագործման վերաբերյալ
Այս հրապարակումը տեղեկատվական առաջարկ է, հասանելի է անվճար և նախատեսված չէ վաճառքի համար: Այն չի կարող օգտագործվել կուսակցությունների կամ ընտրական աշխատողների կողմից նախընտրական քարոզարշավների ժամանակ նախընտրական գովազդի նպատակով (դաշնային, նահանգային կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ կամ Եվրախորհրդարանի ընտրություններ):

Բովանդակություն

1. Ամփոփագիր ____ 4
2. Ներածություն ____ 5
3. Հետազոտության մեթոդաբանություն ____ 8
4. Խորհրդարանական ընտրություններում օրենսդրական գենդերային քվոտայի բարելավումը ____ 9
5. Կուսակցությունների ներսում գործող կամավոր քվոտաները ____ 13
6. Կուսակցությունների ներսում կին քաղաքական գործիչների առաջխաղացման համար տրամադրվող պետական ֆինանսավորումը ____ 16
7. Եզրակացություն ____ 21
8. Գրականության ցանկ ____ 23
10. Հեղինակի մասին ____ 26

1. Ամփոփագիր

Այս զեկույցը դիտարկում է կանանց քաղաքական մասնակցության խթանման հատուկ միջոցների՝ մասնավորապես օրենսդրական գենդերային քվոտայի բարելավման, կուսակցությունների ներսում գործող կամավոր քվոտաների սահմանման և կուսակցությունների ներսում կին քաղաքական գործիչների առաջխաղացման համար տրամադրվող պետական ֆինանսավորման ուսումնասիրությունն ու կիրառումը Հայաստանում:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քվոտաների շեմի աստիճանաբար բարձրացումն ընդունված մոտեցում է մի շարք քաղաքական համակարգերում, և կանանց ներկայացվածության աճը նման դեպքերում կրում է բնականոն ընթացք՝ անկախ սահմանված քվոտայի մակարդակից: Սակայն ՀՀ-ում քվոտաների շեմի բարձրացման վերաբերյալ տեսակետները տարբեր են: Չնայած դրան՝ կա ընդհանուր համաձայնություն այն հարցում, որ հատուկ միջոցների կիրառումը՝ համադրված լայնածավալ հանրային և գենդերային քաղաքականության հետ, կարևոր է ինչպես առկա առաջընթացը պահպանելու, այնպես էլ որակապես ու քանակապես ավելի բարձր կանանց ներգրավվածություն ապահովելու համար:

Ներկուսակցական մեխանիզմները՝ մասնավորապես կամավոր գենդերային քվոտաների սահմանումը կուսակցությունների ներսում, եւ պետության կողմից կուսակցություններին տրամադրվող նպատակային ֆինանսավորումը որպես կանանց առաջխաղացմանը նպաստող ծրագրեր Հայաստանում դեռ քիչ են կիրառվում, սակայն ունեն որոշակի ներուժ՝ կանանց ներգրավվածությունը կուսակցությունների ներսում ամրացնելու համար: Այս միջոցների հետևողական և երկարաժամկետ կիրառումը կարող է լրացնել օրենսդրական քվոտաները և նպաստել գենդերազգայուն քաղաքական մշակույթի ձևավորմանը:

Զեկույցը նաև շեշտում է քաղաքական կուսակցությունների և կուսակցական մշակույթի վերափոխման անհրաժեշտությունը, եւ ընդգծում, որ հատուկ միջոցներն ու ժամանակավոր գործիքները արդյունավետ կարող են աշխատել առավել լայն գենդերային ու հանրային քաղաքականության հետ համակարգային և փոխկապակցված մոտեցմամբ՝ ապահովելով ներդրված հատուկ միջոցների արդյունավետ կիրառումն ու երկարաժամկետ կտրվածքով կանանց հավասար ներկայացվածությունը հանրային քաղաքական դաշտում:

Վերջում, կարևորվում է նման հատուկ միջոցների տեղայնացումն ու արդյունավետության բարձրացմանն ուղղված շարունակական ուսումնասիրությունների և հանրային ուշադրության պահպանումը:

2. Ներածություն

Մենք ապրում ենք ժամանակաշրջանում, երբ կանայք կազմում են աշխարհի բնակչության գրեթե կեսը[1], երբ կանանց համաշխարհային զբաղվածության մակարդակը կազմել է գրեթե հիսուն տոկոս[2], երբ միջազգայնորեն ճանաչվել է կանանց ընտրելու և ընտրվելու իրավունքը, իսկ շատ պետություններում ամրագրել են կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը (UN Women, 2024), կանայք շարունակում են բախվել սեռով պայմանավորված խտրականության, իսկ հանրային-քաղաքական կյանքում նրանց ներկայացվածությունը շարունակում է ցածր մնալ: Ըստ Միջխորհրդարանական միության 2025 թվականի հունվարի 1-ի տվյալների ամբողջ աշխարհում խորհրդարանում ներկայացված պատգամավորների ընդամենը 27.2 տոկոսն են կանայք[3]:

Որպես կանոն հասարակական-քաղաքական կյանքում գենդերային հավասարության առաջընթացը ցույց տվող կարևոր ցուցանիշներից մեկը խորհրդարանում կանանց ներկայացվածության տոկոսն է (ՕքսԵՋեն հիմնադրամ, 2020): Կանանց ընտրելու և ընտրվելու իրավունքի իրագործման աստիճանը ոչ միայն արտացոլում է կանանց կարգավիճակը, նրանց ազդեցությունը քաղաքական ինստիտուտների ձևավորման և քաղաքական որոշումների ընդունման գործընթացների վրա, այլև առհասարակ ժողովրդավարական գործընթացների կայունությունը (ՕքսԵՋեն հիմնադրամ, 2020):

Համաձայն Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի 3-րդ հոդվածի կոնվենցիայի մասնակից պետությունները բոլոր, մասնավորապես, քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային բնագավառներում ձեռնարկում են բոլոր համապատասխան, ներառյալ՝ օրենսդրական միջոցները՝ ապահովելու կանանց լիարժեք զարգացումն ու առաջադիմությունը, որպեսզի նրանց համար երաշխավորվեն տղամարդկանց հետ հավասարության հիման վրա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացումն ու դրանցից օգտվելը (Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա, 1979):

Հայաստանն այս կոնվենցիան վավերացրել է 1993 թվականին՝ դառնալով մասնակից

---

[1] Statista. *Global population from 2000 to 2023, by gender*. Statista. Retrieved July 2025, from https://www.statista.com/statistics/1328107/global-population-gender/

[2] 2023 թվականին կանանց համաշխարհային զբաղվածության մակարդակը կազմել է 48.7 տոկոս: Աշխատանքի միջազգային կազմակերպության Վիճակագրական հաշվետվություն 2024: Առցանց հասանելի է՝ https://www.ilo.org/sites/default/files/2024-10/GEDI-STAT%20brief_formatted_28.10.24_final.pdf:

[3] Տվյալները Միջխորհրդարանական միության պաշտոնական կայք էջից՝ https://www.ipu.org/:

պետություն: Ներպետական օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կանանց քաղաքական մասնակցության ապահովմանն ու ընդլայնմանը վերաբերող նորմեր պարունակում են ինչպես երկրի մայր օրենքը՝ Սահմանադրությունը, սահմանադրական օրենքները՝ ՀՀ Ընտրական օրենսգիրքը և Կուսակցությունների մասին ՀՀ օրենք և մի շարք օրենսդրական ակտեր՝ Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքը, Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին ՀՀ օրենքը, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարությունները (այժմ գործում է 2025-2028թթ. ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը) :

Իհարկե, իրավական դաշտի բարելավումը, փաստացի գենդերային հավասարությանն ուղղված գործողությունների մշակումն ու իրականացումը սոցիալ-հոգեբանական, տնտեսական, կրթական, մշակույթային եւ իրավաքաղաքական բազմաշերտ ու երկարաժամկետ ջանքեր, ռեսուրսներ ու կամք է պահանջում (Committee on the Elimination of Discrimination against Women, 2022), որի արդյունքում ձևավորված գենդերազգայուն ու իրավահավասար հասարակության պատկերը կարող է արտացոլվել նաև գենդերային հավասարակշված քաղաքական համապատկերով: Այդ համատեքստում, ըստ կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի, երկարաժամկետ գենդերային հավասարությանն ուղղված քաղաքականության մաս է կազմում տղամարդկանց և կանանց միջև փաստական հավասարության հաստատումն արագացնելուն նպատակաուղղված ժամանակավոր հատուկ միջոցները, եւ դրանց ընդունումը չի համարվում խտրականություն[4]:

Հատուկ ժամանակավոր միջոցները կարևոր դեր ունեն քաղաքականությունում կանանց առաջխաղացման հարցում: Հայաստանյան քաղաքական դաշտում, հատուկ ժամանակավոր միջոցների շարքում առաջինը կիրառվել է և առանձնահատուկ տեղ է զբաղեցնում օրենսդրական գենդերային քվոտան: Այս հետազոտության շրջանակում ՀՀ Ազգային ժողովի 8-րդ գումարման պատգամավորների հետ իրականացված հարցազրույցները միաբան էին, որ գենդերային քվոտայի կիրառումը ևս մեկ անգամ ի ցույց է դրել, որ կանանց ցածր ներկայացվածությունը խորհրդարանում պայմանավորված է եղել ոչ թե կրթության պակասի կամ

[4] Միևնույն ժամանակ պետք է ընդգծել, որ նույն հոդվածը հռչակում է, որ դրանք ոչ մի դեպքում չպետք է հանգեցնեն անհավասար կամ տարբերակված ստանդարտների պահպանման. իսկ միջոցները պետք է վերացվեն, երբ հնարավորությունների և վերաբերմունքի հավասարության նպատակներն իրականություն կդառնան. Տես ավելին. Կանանց նկատմամբ բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա, 18 դեկտեմբերի 1979թ.: Առցանց հասանելի է՝ https://www.arlis.am/hy/acts/60505:

հմտությունների բացակայությամբ, այլ ձևավորված քաղաքական մշակույթի հետևանք [5] և եթե նման գործիք չկիրառվեր, ապա «կանանց մասնակցությունը գուցե չափազանց քիչ՝ 5 կամ 10 տոկոս լիներ»[6] ներկայումս[7]:

Չնայած արձանագրված առաջընթացին, ակնհայտ է, որ միայն քվոտաները բավարար չեն քաղաքական դաշտում կանանց լիարժեք ներգրավվածությունն ապահովելու համար: Անկասկած, գենդերային քվոտաների ներդրումը նպաստել է քաղաքականության մեջ կանանց թվի աճին, սակայն մասնագետները հաճախ շեշտում են, որ այդ աճը հիմնականում քանակական է, և որ քաղաքականության մեջ ներգրավված կանանց ազդեցությունը մնում է սահմանափակ (ՕքսԵՋեն հիմնադրամ, 2024): Ի ապացույց դրա. Հայաստանի երրորդ հանրապետության ամբողջ պատմության ընթացքում Ազգային ժողովը երբեք չի ունեցել կին նախագահ: Ներկայումս ԱԺ նախագահի տեղակալներից որևէ մեկը կին չէ, որևէ խմբակցություն կին չի ղեկավարում, իսկ ԱԺ մշտական հանձնաժողովի նախագահներից միայն երկուսն են կին, որն էլ ուղիղ համեմատական է ԱԺ խորհրդում կանանց թվին[8]:

Ուստի երկարաժամկետ ու բազմաոլորտ գենդերային քաղաքականության մշակման ու իրականացման շրջանակում քաղաքական գործընթացներում կանանց դերակատարության խորացման նպաստող լրացուցիչ ժամանակավոր գործիքներ և մեխանիզմներ ներդնելը փոխլրացնող ու փոխամրապնդող լծակ կարող է հանդիսանալ: Դրանով պայմանավորված աշխատանքի շրջանակում հետազոտվել են կանանց քաղաքական մասնակցությունն ապահովող այնպիսի ժամանանակավոր միջոցառումներ, ինչպիսիք են՝ օրենսդրական գենդերային քվոտայի բարելավումը[9], կուսակցությունների ներսում կամավոր գենդերային քվոտաների ներդրումը (International IDEA, 2025), կուսակցությունների ներսում կին քաղաքական գործիչների առաջխաղացման համար տրամադրվող պետական ֆինանսավորումը (Ohman M., 2018):

---

[5] Հարցազրույց ՀՀ ԱԺ ութերորդ գումարման պատգամավորի հետ (05.06.2025):

[6] Հարցազրույց ՀՀ ԱԺ ութերորդ գումարման պատգամավորի հետ (30.05.2025):

[7] Այժմ կանայք կազմում եմ ՀՀ ԱԺ պատգամավորների 38.32%-ը: Տվյալները Միջխորհրդարանական միություն պաշտոնական կայք էջից, Առցանց հասանելի է՝ https://www.ipu.org/parliament/am:

[8] Տվյալները Ազգային ժողովի պաշտոնական կայք էջից: Առցանց հասանելի է՝ http://parliament.am/:

[9] Օրինակ ՝ Մեքսիկայում գենդերային քվոտան կազմում է 50%: Առցանց հասանելի է՝ https://www.idea.int/data-tools/data/gender-quotas-database/country?country=144#additional-reading:

3. Հետազոտության մեթոդաբանություն

Սույն հետազոտության խնդիրն ու շրջանակը չի ներառում կանանց քաղաքական առաջխաղացման ուսումնասիրությունը լայն գենդերային քաղաքականության շրջանակում, այլ նպատակ ունի ծանոթացնելու օրենսդրական քվոտայի բարելավման, կուսակցությունների ներսում կամավոր գենդերային քվոտաների ներդրումը, կուսակցությունների ներսում կին քաղաքական գործիչների առաջխաղացման համար տրամադրվող ֆինանսավորումը որպես կանանց քաղաքական առաջխաղացմանը խթանող հատուկ ժամանակավոր միջոցները և դրանց կիրառելիության խնդիրներին Հայաստանում:

Աշխատանքը իրականացվել է հրապարակված գրավոր աղբյուրների՝ ՕքսԵՋեն հիմնադրամի, IDEA կազմակերպության հետազոտությունների, Միացյալ ազգերի կազմակերպության և Միջխորհրդարանական միության տվյալների, Եվրոպական միության խորհրդարանի հրապարակային վերլուծությունների և այլ նյութերի, ինչպես նաև տարբեր երկրներում այդ միջոցների կիրառման օրինակների ուսումնասիրությունների և ոլորտի փորձագետների և քաղաքական գործիչների հետ հարցազրույցների անցկացման մեթոդներով: Հարցազրույցները կատարվել են ոլորտի երեք փորձագետների և Ազգային ժողովի ութերորդ գումարման խորհրդարանական մեծամասնության՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության երեք կին պատգամավորների հետ հստակ հարցաշարով հարցազրույցի ձևաչափով:

4. Խորհրդարանական ընտրություններում օրենսդրական գենդերային քվոտայի բարելավումը

Կանանց քաղաքական առաջխաղացման թերևս ամենատարածված ու կիրառելի հատուկ ժամանակավոր միջոցը օրենսդրական գենդերային քվոտան է (Council of Europe Roma and Travellers Team, 2018): Այն ենթադրում է ինստիտուցիոնալ մեխանիզմ, որը կիրառվում է տարբեր ոլորտներում և կառավարման մակարդակներում՝ նպատակ ունենալով վերացնել պատմականորեն ձևավորված գենդերային անհավասարությունը: Մասնավորապես՝ այն ուղղված է կանանց մասնակցության խթանմանը քաղաքական, հասարակական, տնտեսական և այլ կարևոր ոլորտներում որոշումների ընդունման գործընթացներում, ինչպես նաև նրանց ընդգրկվածության ապահովմանը միջազգային կառույցներում: Բացի այդ, այն նպաստում է կրթության և աշխատանքի հավասար հնարավորությունների ձևավորմանն ու ապահովմանը (European Institute for Gender Equality, 2025): Օրենսդրական գենդերային քվոտաների առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրանք ամրագրվում են նորմատիվ իրավական ակտերում, որպես կանոն՝ Սահմանդրություններում, ընտրական օրենգրքերում կամ կուսակցությունների մասին օրենքներում (United Nations Gender Quota Portal, 2025):

Հայաստանում օրենսդրական գենդերային քվոտան գործում է երկու տասնամյակից ավել: Այն առաջին անգամ ներդրվել է դեռևս 1999 թվականին ընդունված Ընտրական օրենսգրքով: Համաձայն դրա 100-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ներկայացրած ընտրական ցուցակում առնվազն 5 տոկոսը պետք է լինեին կանայք: Արդյունքում 2003 թվականի խորհրդարանական ընտրություններում կին պատգամավորները կազմեցին պատգամավորների ընդհանուր թվի 5.3%-ը (ՕքսԵՁեն հիմնադրամ, 2024) : Դրան հաջորդեցին 2005, 2011, 2016 և 2020 թվականների օրենսդրական փոփոխությունները՝ գենդերային քվոտան 5%-ից բարձրացնելով համապատասխանաբար 15%, 20%, 25%, այնուհետև՝ 30% (Equal Future Eurasia, 2025): 2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրություններին ուժի մեջ մտավ ՀՀ ընտրական օրենսգրքի 83.4-րդ հոդվածը, որը սահմանում է թեկնածուների առնվազն 30/70 սեռային համամասնությունը քաղաքական ուժերի ընտրացուցակներում: Վերոգրյալից պարզ է դառնում, որ ՀՀ-ում ժամանակի ընթացքում անցնելով էվոլյուցիոն փուլեր՝ կանանց համար սահմանված 5% քվոտայից (ՀՀ Ազգային ժողով, ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենք, 100-րդ հոդվածի մաս 2, 1999) վերածվել է առնվազն 30% այլ սեռի ներկայացվածության պահանջ դնող

քվոտայի (ՀՀ Ազգային ժողով, ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենք, 83-րդ հոդվածի 4-րդ մաս) :

Ինչպես հայտնի է օրենսդրական գենդերային քվոտան ինքնին հատուկ ժամանակավոր միջոց է, սակայն օրենսդրության մեջ դրա արտացոլվածությունը կարող է տարբեր լինել ինչպես տոկոսային, այնպես էլ ձևակերպման տեսակյունից: Օրենսդրական գենդերային քվոտա սահմանած երկրների մեծ մասում քվոտան 30%-ն է: Այնուամենայնիվ կան պետություններ, որոնք խորհրդարանական ընտրությունների նախընտրական ցուցակների համար սահմանում են 30%-ից ավելի գենդերային քվոտա սահմանելով 35%, ինչպես Սլովենիայում, Լեհաստանում, Վիետնամում և այլն, 40%, ինչպես Պորտուգալիայում, Իտալիայում, Մոլդովայում և այլն, ընդհուպ մինչև 50% քվոտա, ինչպես Մեքսիկայում, Իսպանիայում, Արգենտինայում, Բելգիայում և այլն (United Nations Gender Quota Portal, 2025): Դրանք կարող են տոկոս սահմանել հատուկ կանանց համար, ինչպես 1999 թվականի ՀՀ ընտրական օրենսգրքում կամ սահմանել առավելագույն կամ նվազագույն շեմ այլ սեռի ներկայացվածության համար, ինչպիսին ներկայիս կարգավորումն է: Սակայն որոշ դեպքերում կուսակցությունների նախընտրական ցուցակների համար օրենսդրական գենդերային քվոտայի բարձր շեմի սահմանումը բավարար չէ կանանց պատշաճ ներկայացվածությունն ապահովելու համար, քանի որ ինչպես փորձը ցույց տվեց, նախկինում շատ կանայք ընտրություններից հետո պարզապես վայր էին դնում մանդատները, իրենց տեղը զիջելով տղամարդ թեկնածուներին: Արդյունքում ստացվում էր, որ թեկնածուների ցուցակների համար սահմանված օրենսդրական քվոտայի առկայությունը կրում է զուտ արհեստական բնույթ, քանի որ օրենսդրությամբ ամրագրված քանակական պահանջը կատարելուց հետո կանանց որակական ներկայացվածությունը փոփոխություն չի կրում ներկայացուցչական մարմիններում Այդ պատճառով քաղաքացիական հասարակությունը առաջարկով կատարվեցին օրենսդրական փոփոխություններ, որոնց համաձայն եթե ընտրական ցուցակում նվազ ներկայացված սեռի թեկնածուներ չկան, ապա այդ մանդատը մնում է թափուր (Հետք. հետաքննող լրագրողներ ինտերնետային թերթ, 2023):

Սակայն դրան հակադիր օրինակ՝ Մեքսիկայում օրենսդրական գենդերային քվոտայի 50%-ի շեմի հաստատումը բերել է կանանց թվի էական աճի (Hassett J. 2024): Բայց այս օրինակներին զուգահեռ կա նաև այլ հետաքրքիր օրինակ, երբ երկրներում կանանց քաղաքական մասնակցության տոկոսային հարաբերակցությունն ավել է սահմանված քվոտայից: Նման իրավիճակ է այժմ Հայաստանում, սահմանված 30%-ի փոխարեն խորհրդարանում կանայք կազմում են պատգամավորների 38,3%-ը, Անդորրայում սահմանված 40%-ի փոխարեն կանայք կազմում են 50%-ը, իսկ

Ալբանիայում 30%-ի փոխարեն 35.7% (United Nations Gender Quota Portal, 2025): Իհարկե, շատ չեն նման օրինակները, բայց դրանց առկայությունը ապացուցում է, որ կանանց ներկայացվածության բարձր մակարդակը ոչ միայն հնարավոր է, այլև խթանվում է, երբ կիրառվում են նպատակային քաղաքական միջոցառումներ և հետևողականություն: ՀՀ-ում օրենսդրական քվոտայի հնարավորն բարելավման մասին հարցին ԱԺ պատգամավորներից մեկը պատասխանեց, «Չէ, էս պահին այն իդեալական գործում է»[10]: Մեկ այլ պատգամավոր ընդգծեց, որ «այո, իհարկե, ես կարծում եմ, որ քաղաքականության մասով պիտի մենք կարողանանք ներդնել և ՏԻՄ ընտրություններում և Կառավարության անդամների դեպքում»[11]: Մեզ հետ զրուցած ԱԺ մյուս պատգամավորն էլ ընդգծեց. «գրեթե համոզված եմ, որ եթե քվոտայի մեխանիզմը չլիներ ապա Ազգային ժողովում չէինք ունենա այս ներկայացվածությունը.[..]»: Ավելին, փորձագիտական տեսանկյունից առաջնահերթ է համարվում ներկա իրավիճակի ամրապնդումը, ինչպես նշվեց փորձագետներից մեկի կողմից. «[Չ]եմ կարծում, որ էս պահին պետք է մեծացնել քվոտան: Իրականում քաղաքական կուսակցությունները իրենք ցուցակներում 30%-ից ավել արդեն ապահովում են: Հիմա, էս պահին քվոտայի բարձրացման խնդիր չի դրվում, պետք է քվոտայի պահպանման խնդիր դրվի[12]: Մեկ այլ փորձագետի կարծիքով էլ քվոտայի բարձրացումը ինքնանպատակ չպետք է լինի, այլ ուղղորդվի ընդհանուր գենդերային քաղաքականության լայն նպատակներով ու գործիքներով. «միշտ բարելավման ուղի կա, սակայն դա կապված է քաղաքական կամքի առկայության հետ՝ ոչ միայն խոսքի մակարդակով, այլև գործնականում: Այս ոլորտում, կարծում եմ, որ էլի քաղաքացիական հասարակությունը չի դադարելու հարցը առաջ մղել: Լավ կլինի, որ քվոտայի տոկոսները բարձրանան, բայց կարևոր է, որ Կառավարությունը թե մեդիայով, թե այլ հոսքերով սովորական քաղաքացուն բացատրվի, թե ինչի է դա կարևոր» [13]:

Հարցը ավելի լայն գենդերային քաղաքականության շրջանակում դիտարկելու խորհուրդ է տրվում նաև մյուս փորձագետի կողմից. «Երբ նայում ենք բարձրագույն կրթություն ստացողների թվին, առաջադիմությանը, հասարակական ակտիվությանը, անգամ տարբեր նախարարություններում աշխատողների սեռային համամասնությանը՝ պարզ է դառնում, որ կանայք միջին օղակներում շատ մեծ թիվ են կազմում, բայց երբ հերթը հասնում է որոշում կայացվող դերին՝

[10] Հարցազրույց ՀՀ ԱԺ ութերորդ գումարման պատգամավորի հետ (05.06.2025):

[11] Հարցազրույց ՀՀ ԱԺ ութերորդ գումարման պատգամավորի հետ (19.06.2025):

[12] Հարցազրույց փորձագետի հետ (30.05.2025):

[13] Հարցազրույցի փորձագետի հետ (15.05.2025):

տղամարդիկ են, բայց ի ուրախություն մեզ վերջին տարիներին տենդենցը փոփոխվում է: Այնուամենայնիվ կանանց պոտենցիալը Հայաստանում շատ-շատ է, բայց բավարար իրացված չէ, դրա համար կարող ենք քվոտան աստիճանաբար բարձրացնել սկզբում 35 հետո 40% և այլն: Չէ որ սկզբում ընդամենը 5% էր, հետո աստիճանաբար բարձրացել է»:[14] Հետևաբար, օրենսդրորեն սահմանված գենդերային քվոտան քաղաքականությունում կանանց ներկայացվածությունն ու ազդեցությունն ավելացնելու նպատակը չպետք է դիտարկել որպես մասնավոր գործիք, այլ առավել լայն գենդերային ու հանրային քաղակականության աստիճանական զարգացման միջոցառում:

Ամփոփելով պետք է նշել, որ օրենսդրական գենդերային քվոտայի աստիճանաբար բարձր շեմ սահմանելը բավական տարածված է այս գործիքն օգտագործող քաղաքական համակարգերում, իսկ կանանց ներկայացվածության թվի աճը կարծես բնականոն դինամիկա ունի նման համակարգերում անկախ սահմանված քվոտայից: Եվ չնայած, ՀՀ-ում օրենսդրական գենդերային քվոտայի ավելի բարձր շեմի սահմանման շուրջ մեզ հետ զրուցած պատգամավորների և փորձագետների տեսակետները միակարծիք չեն, սակայն միանշանակ է անհրաժեշտ միջոցառումների կարևորությունը՝ հատուկ գործիքների ու ավելի լայն հանրային ու գենդերային քաղաքականության միջոցով ներկայիս արդյունքները պահպանելու եւ ապագայում կանանց որակական ու քանակական ներկայացվածությունը բարելավելու համար, այդ թվում հանրային կրթական ու իրազեկման միջոցառումների միջոցով:

[14] Հարցազրույց փորձագետի հետ (20.05.2025):

5. Կուսակցությունների ներսում գործող կամավոր քվոտաները

Կուսակցությունների ներսում գործող գենդերային կամավոր քվոտան ժամանակավոր հատուկ միջոցի տեսակ է, որը պարտադիր չէ օրենքով, այն հիմնվում է կուսակցությունների ներքին որոշումների վրա: Կուսակցությունների ներսում գործող գենդերային քվոտաները քաղաքական կուսակցությունների կողմից կամավոր ընդունված միջոցառումներ են, որոնք կարող են սահմանվել ինչպես կուսակցության թեկնածուների նախընտրական ցուցակների, այնպես էլ կուսակցությունում գործող գործադիր մարմինների, տարածքային կազմակերպությունների և այլ կառուցվածքային մասերի համար: Դրանց հիմնական նպատակն է խթանել կանանց մասնակցությունը քաղաքական գործընթացներին սահմանելով ներկուսակցական միջոցներ: Կուսակցությունների ներսում գործող կամավոր քվոտաների և օրենսդրական քվոտաների ամենամեծ տարբերությունը կայանում է նրանում, որ կամավոր քվոտաները չեն սահմանվում օրենքով: Այս ժամանակավոր հատուկ միջոցները հիմնականում կիրառվում են այն երկրներում, որտեղ չեն գործում գենդերային քվոտայի օրենսդրական կարգավորումները (European Parliamentary Research Service, 2023), ինչպիսին է օրինակ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը, Ավստրիայի Հանրապետությունը, Իսլանդիայի Հանրապետությունը, Մեծ Բրիտանիան և այն (International IDEA. Gender Quotas Database, 2025): Այսպիսի երկրներում քաղաքական կուսակցությունների ինստիտուցիոնալ մշակույթը կարող է էական դեր ունենալ կին քաղաքական գործիչների առաջխաղացման գործում: Հաշվի առնելով, որ կամավոր կուսակցական քվոտաները օրենքով պարտադիր չեն, դրանք իրավաբանորեն պարտադիր չեն, և չկա պատժամիջոցների համակարգ, այնուամենայնիվ, քանի որ այս քվոտաները բխում են կուսակցության ներքին որոշումից, դրանք հաճախ նույնչափ կատարվում են, ինչպես օրենսդրական քվոտաները և, հետևաբար նաև արդյունավետ են (Zamfir I., 2023): Իհարկե, նման քվոտաները չափազանց կարևոր են այն երկրներում, որտեղ չկան պարտադիր քվոտաներ, բայց նույնիսկ օրենսդրական քվոտայի առկայության պարագայում կուսակցությունները ունենալով գենդերային ավելի հավակնոտ ծրագրեր, կարող են սահմանել ներքին կամավոր քվոտաներ: Օրինակ, նրանք կարող են ձգտել ավելի բարձր քվոտաների, օրինակ՝ օրենսդրական 40% քվոտայի փոխարեն սահմանել 50% կամավոր քվոտա կամ կին թեկնածուներին նախընրտական ցուցակներում հատկացնել ավելի բարձր տեղեր՝ մեծացնելով նրանց ընտրական շեմը հաղթելու հավանականությունը :

Պետք է նշել, որ որպես կանոն կամավոր քվոտայի առկայությունը պայմանավորված է նաև կուսակցության որդեգրած

քաղաքական գաղափարախոսությամբ: Եվրոպական միության երկրներում կամավոր քվոտաները մեծ մասամբ սահմանափակվում են քաղաքական ձախ կողմում գտնվող կուսակցություններով, ինչպիսիք են օրինակ՝ Դանիայի կարմիր-կանաչ այլանս կուսակցությունը, Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը և այլն, բայց կան նաև դեպքեր, երբ դրանք ընդունվել են խոշոր կենտրոնամետ կուսակցությունների կողմից, որոնցից են՝ Ավստրիայի ժողովրդական կուսակցությունը, Կիպրոսի ժողովրդավարական կուսակցությունը[15]:

Կամավոր կուսակցական քվոտաներով կազմված թեկնածուների ցուցակներում տեղերի հաստատուն թիվը կամ տոկոսը կամ թեկնածուների ընդհանուր թիվը հատկացվում է կանանց: Որպեսզի այս տեսակի քվոտան իսկապես արդյունավետ լինի, այն հաճախ զուգակցվում է տեղաբաշխման չափանիշների հետ, որոնցով կանանց խոստանում են ոչ միայն առաջադրում, այլև «հաղթելու» տեղերի առաջադրում: Սա երբեմն անվանում են «կրկնակի քվոտա» (ACE Electoral Knowledge Network, 2025) : Դրա օրինակ է «կայծակաճարմանդ քվոտան», որի համաձայն թեկնածուների ցուցակում մի սեռի ներկայացուցչին պետք է հաջորդի մյուս սեռի ներկայացուցիչ: Արդյունքում ստացվում է, որ կին թեկնածուները զբաղեցնում են թեկնածուների ցուցակների յուրաքանչյուր երկրորդ տեղը:

Հայաստանում նախընտրական ցուցակների համար կուսակցությունների ներսում կամավոր քվոտաներ ըստ էության չեն գործում, քանի որ կուսակցությունները բավարարվում են օրենսդրական քվոտայի պահանջի կատարմամբ (Reilly B., & Reyes, S., 2016): Ինչ վերաբերում է ներկուսակցական մարմիներում կամավոր քվոտայի սահմանմանը, ապա նման պրակտիկայի կիրառումը ՀՀ-ում ևս ասոցացվում է քաղաքական մշակույթի ու արժեքների ձևավորման հետ: Ինչպես օրինակ՝ ՀՀ Ազգային ժողովում մեծամասնություն ներկայացնող քաղաքական ուժի պատգամավորը այս հետազոտության շրջանակում կատարված հարցազրույցի ժամանակ նշեց. «Մեր կուսակցությունում մենք տարածքային կազմակերպություններում ունենք պարտադիր 30 տոկոս կանանց մասնակցության հարց, այսինքն՝ կուսակցությունը մեր զարգացումը պատկերացնում է ապակենտրոն, իսկ այդ ապակենտրոն կառավարման կենտրոններում պատկերացնում է 30 տոկոս կանանց ներգրավվածություն և առաջին անգամ է, որ մենք քվոտա կկիրառենք նաև վարչության[16] ընտրություններում՝ խորհրդարանի մոդելով: Դա ոչ թե առանձին ցուցակ է լինելու, այլ 5 կանայք ցուցակի մեջ լինելու են վարչությունում ու ես կարծում եմ, որ սա

[15] Կիպրոսի ժողովրդավարական կուսակցության պաշտոնական կայք էջ https://disy.org.cy/

[16] Կուսակցության գործադիր մարմինն է

կարևոր քաղաքական մշակույթի ձևավորում է , ու լավ է , որ իշխող կուսակցությունն է , սա նախաձեռնողը, որովհետև մեծ հաշվով մենք ենք քաղաքական մշակույթ թելադրողները»[17]:

Հատկանշական է, որ վերոնշյալ կարծիքը կիսում են նաև ոլորտի որոշ մասնագետներ (Gender quota database, 2025): Ոլորտի փորձագետներից մեկն էլ առաջարկեց դիտարկել իշխող կուսակցությունից զատ այլ կուսակցություններում որոշում կայացման օղակներում քվոտայի սահմանման հարցը, որը իր կարծիքով կարող է ներկուսակցական մարմիններում կանանց թիվը ավելացնելով՝ նվազեցնել այդ կուսակցությունների նախընտրական ցուցակներում կին թեկնածուների ձևական ներգրավումը և հետագայում նրանց կողմից մանդատները վայր դնելու պրակտիկան[18]:

Ամփոփելով այս հատուկ ժամանակավոր միջոցի ուսումնասիրությունը կարելի է նշել, որ կուսակցության ներսում կիրառվող առաջին հայացքից խիստ ներկուսակցական միջոցի տևական և հետևողական կիրառումը կարող է մեծ ազդեցություն ունենալ ընդհանուր քաղաքական դաշտում կանանց զգալի որակական աճի վրա, փոխլրացնող գործիք լինել օրենսդրորեն սահմանված խորհրդարանում գենդերային քվոտաների կիրառման համար, և նպաստել առավել լայն գենդերային քաղաքականության իրականացմանն ու գենդերազգայուն քաղաքական մշակույթի ձևավորմանը:

[17] Հարցազրույց ՀՀ ԱԺ ութերորդ գումարման պատգամավորի հետ 05.06.2025

[18] Հարցազրույց փորձագետի հետ 20.05.2025

6. Կուսակցությունների ներսում կին քաղաքական գործիչների առաջխաղացման համար տրամադրվող պետական ֆինանսավորումը

Հաջորդ ժամանակավոր միջոցը, որն ուսումնասիրվել է այս հետազոտության շրջանակում՝ կուսակցությունների ներսում կին քաղաքական գործիչների առաջխաղացման համար տրամադրվող պետական ֆինանսավորումն է: Այն պետության կողմից կուսակցություններին տրամադրվող աջակցության տեսակ է (Ականատես դիտորդական առաքելություն, 2019):

Կուսակցությունների պետական ֆինանսավորումը (պետական սուբսիդավորումը) իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ որոշակի հանրային աջակցություն ունեցող և եկամտի այլ էական աղբյուրներ չունեցող կուսակցությունների կենսունակությունն ու ինքնուրույնությունը խթանելու նպատակով, իսկ ծախսերն արտացոլվում են պետական բյուջեում առանձին հոդվածով (ՀՀ Ազգային ժողով, Կուսակցությունների մասին, ՀՀ սահմանադրական օրենք 26-րդ հոդված, մաս 1, 2016*):* Կուսակցությունների պետական ֆինանսավորումը սահմանվում է օրենքով, որում նախատեսվում են այն պահանջները, որոնց ամբողջական բավարարման դեպքում միայն կուսակցությունները կկարողանան ստանալ պետական ֆինանսավորումը:

Հայաստանում պետական ֆինանսավորումը կարող է լինել ինչպես ընդհանուր, այնպես էլ նպատակային (Անվտանգային քաղաքականության հետազոտման կենտրոն, 2024): Ընդհանուր պետական ֆինանսավորում հատկացվում է այն կուսակցությանը, որի ընտրական ցուցակն Ազգային ժողովի վերջին ընտրությունների ժամանակ ստացել է քվեարկությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին կողմ տրված ձայների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի առնվազն 2 տոկոսը (ՀՀ Ազգային ժողով, Կուսակցությունների մասին, ՀՀ սահմանադրական օրենք 26-րդ հոդված, մաս 3, 2016*)*: Եթե ընդհանուր ֆինանսավորումը տրամադրվում է վերոնշյալ պահանջը բավարարող ցանկացած քաղաքական կուսակցության, ապա նպատակային ֆինանսավորումն արտահայտում է կուսակցական համակարգի զարգացման և կայունացման ոլորտում պետության նախանշած առաջնահերթությունները, քանի որ նպատակային ֆինանսավորումը պետք է ծախսվի դրանց վրա: Կուսակցություններն իրենց տարեկան հաշվետվություններում ուղղությունների վերաբերյալ տեղեկատվություն են ներկայացնում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, ինչի եզրակացության հիման վրա տրամադրվում է նպատակային ֆինանսավորումը (Անվտանգային

քաղաքականության հետազոտման կենտրոն, 2024):

Կուսակցությունների ներսում կին քաղաքական գործիչների առաջխաղացման համար տրամադրվող պետական ֆինանսավորումը նպատակային ֆինանսավորման տարատեսակ է, որը մի կողմից ուղղված է գենդերային անհավասարության նվազեցման միջոցով ընտրված մարմիններում կանանց ներկայացվածության բարձրացմանը՝ նախևառաջ թեկնածուների կամ ընտրված ներկայացուցիչների շրջանում, իսկ մյուս կողմից՝ ընտրված մարմիններում պաշտոնական ներկայացվածությունից անդին կանանց լիազորությունների ընդլայնմանն ու քաղաքական կյանքում նրանց հավասարակշռված ներգրավվածության ապահովմանը (Ohman M., 2018):

Ընդհանուր առմամբ կուսակցությունների ներսում կին քաղաքական գործիչների առաջխաղացման համար տրամադրվող պետական ֆինանսավորման նպատակը ավելի շատ կին թեկնածուների առաջադրումն է: Այդ գործընթացում ֆինանսավորումը հանդիսանում է խրախուսող միջոց, քանի որ որքան մեծ է գենդերային հավասարության մակարդակը, այնքան շատ է ֆինանսավորումը (Ohman M., 2018):

Եվրոպական Միության խորհրդարանը կուսակցություններում կին քաղաքական գործիչների առաջխաղացման համար տրամադրվող ֆինանսավորումը դիտարկում է որպես քաղաքականության մեջ առաջացած գենդերային բացը լուծելու միջոց՝ մատնանշելով Ֆրանսիայում և Պորտուգալիայում գործող պետական ֆինանսավորումը, որը կուսակցությունների գենդերային հավասարության մակարդակին կապող կարգավորումները միջնաժամկետ հեռանկարում ամրապնդել են կանանց դերը քաղաքական կուսակցություններում և կարող են լինել խորհրդարանում ընտրված կանանց թվի մեծ աճի պատճառներից մեկը (European Parliament, 2024): Բացի այս երկրներից նման կարգավորումներ են գործում նաև Ալբանիայում (Mirela Arqimandriti, 2023), Խորվաթիայում, Կիպրոսում և այլն (EuroPAM European Public Accountability Mechamisms, 2025):

Այս միջոցը նորություն չէ Հայաստանի համար պետական նպատակային ֆինանսավորման գործիքակազմի շրջանակում: Կուսակցությունների մասին օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, եթե հաշվետու տարում կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմում պակաս ներկայացված սեռի ներկայացուցիչների թիվը գերազանցում է 40 տոկոսը, ապա կուսակցությանը տրամադրվում է պետական նպատակային ֆինանսավորման կեսը: Եթե կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմում պակաս ներկայացված սեռի ներկայացուցիչների թիվը կազմում է 20-40 տոկոս, ապա կուսակցությանը տրամադրվում է պետական նպատակային ֆինանսավորման մեկ քառորդ մասը: Եթե կուսակցության

մշտապես գործող ղեկավար մարմնի կազմում պակաս ներկայացված սեռի ներկայացուցիչների թիվը պակաս է 20 տոկոսից, ապա կուսակցությանը պետական նպատակային ֆինանսավորման կեսը չի տրամադրվում: Բացի նպատակային ֆինանսավորման այս տեսակից գործում է մեկ այլ՝ մարզային ստորաբաժանումների առկայության դեպքում և դրանց գործունեության ապահովման համար տրամադրվող նպատակային ֆինանսավորումը: Այսպես. կուսակցությանը տրամադրվում է պետական նպատակային ֆինանսավորման մյուս կեսը, եթե կուսակցությունը հաշվետու տարում ունեցել է տարածքային ստորաբաժանումներ Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն կեսում: Նախատեսված նպատակային ֆինանսավորումը կուսակցությանը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության մարզերում կուսակցության տարածքային ներկայացվածության և տարածքային ստորաբաժանումների գործունեության ապահովման նպատակով (ՀՀ Ազգային ժողով, *Կուսակցությունների մասին ՀՀ սահմանադրական օրենք 26-րդ հոդված, մաս 8, 2016):* Գործում էր նաև կուսակցության գաղափարախոսության, ծրագրային նպատակների և հանրային քաղաքականության հարցերի մասին հետազոտությունների իրականացրած և հրապարակարած լինելու դեպքում տրամադրով պետական նպատակային ֆինանսավորումը, սակայն այն հանվեց 2024 թվականի վերջին:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Մարիամ Գալստյանը Ազգային ժողովի պետական-իրավական հարցերով մշտական հանձնաժողովի նիստին 2024 թվականի գործունեության վերաբերյալ հաղորդումը ներկայացնելիս նշեց, որ պետական ֆինանսավորում ստանալու համար օրենսդրութամբ նախատեսված պահանջները բավարարող 5 կուսակցություններից միայն մեկը՝ «Հանրապետություն» կուսակցությունն է երեք պայմաններին համապատասխանելով ստացել է ամբողջական ֆինանսավորումը: «Քաղաքացիական պայմանագիր» և «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցությունները չեն բավարարել կուսակցության ղեկավար մարմնում սեռերի ներկայացվածության պահանջին, իսկ «Բարգավաճ Հայաստան» և «Վերածնվող Հայաստան» կուսակցությունները՝ նաև մարզերում տարածքային ստորաբաժանումներ ունենալու պահանջին, ուստի ամբողջությամբ չեն ստացել նպատակային ֆինանսավորումը[19]: Ստացվում է, որ միայն մեկ կուսակցություն է իր ղեկավար մարմնի կազմում ապահովել կանանց թվի բավարար մակարդակ,

[19] ՀՀ Ազգային ժողով: (2025, Հունիսի 12): *ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերով մշտական հանձնաժողովի նիստ [Տեսանյութ]*: YouTube: https://www.youtube.com/live/eMtzLW4fYvM?si=6XGA1IpXRHSMKl2J:

այդպիսով ստանալով ֆինանսավորումը:

Հայաստանում Կուսակցությունների ներսում կին քաղաքական գործիչների առաջխաղացման համար տրամադրվող պետական ֆինանսավորման կիրառելության հարցը քննարկելիս պարզ դարձավ, որ գործիքը նոր է, քիչ կիրառելի և անհամամասնորեն սահմանափակված քաղաքական կուսակցությունների մշակույթով ու ավանդաբար ստեղծված ոչ թափանցիկ ֆինանսավորմամբ: ԱԺ պատգամավորներից մեկը նշեց. «Ցավոք ոչ, ՀՀ-ում դեռևս չեմ տեսնում դրա արդյունավետությունը, քանի որ կուսակցությունները որոշել են չգնալ այդ ճանապարհով և չստանալ հավելյալ ֆինանսական միջոցներ, բայց ես կարծում եմ, որ պետք է շարունակենք այս ոլորտում լրացուցիչ ջանքեր ներդնել»[20]:

Մեկ այլ պատգամավոր ընդգծում էր, որ նման հատուկ ժամանակավոր միջոցներն արդյունավետ են, եթե քաղաքական կուսակցությունները գենդերային հավասարության, գենդերազգայուն քաղաքականության արժեքի կրողն են, իսկ քանի որ հայաստանյան կուսակցությունների մեծ մասը ունի «նախկին օլիգարխիկ պատմություն»[21] և չունի համապատասխան քաղաքական մշակույթ, չի ունենա նաև ցանկություն գենդերային ներկայացվածություն ապահովելու միջոցով այս խրախուսող նորմերից օգտվելու: Նրա կարծիքով կարևոր է կուսակցությունների ներսում ունենալ կամք և ցանկություն՝ ժամանակակից լինելու և նոր քաղաքական մշակույթ ձևավորելու համար[22]:

Ոլորտի փորձագետներից մեկն էլ հարցազրույցի ընթացքում ասաց. «Դեռևս չի նպաստում, հիմա նաև օրենքում փոփոխություններ են արվել, դեռ էս մեխանիզմը արդյունավետ չի, այն արդյունքը, որին հասնելու համար ներդրվել էր էս մեխանիզմը, դեռ չկա»[23]: Չնայած ցածր ակնկալիքներին, բոլորն էլ համաձայն էին, որ լրացուցիչ դրամական միջոցներ ներգրավելու հնարավորությունը գործուն միջոց է որոշակի փոփոխությունների համար. «Ես կարծում եմ, որ այն կարող է նպաստել, բայց չեմ կարող ասել, թե ինչքանով, թե ասում, որ ընդհանրապես չի կարող նպաստել կանանց առաջխաղացմանը, բայց կարծում եմ առավել կարևոր է գաղափարի կրողը լինելը, չնայած ֆինանսավորումը ևս կարևոր է»[24]:

Այս միջոցի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն դեռևս քիչ հայտնի է հայաստանյան քաղաքական դաշտում , իսկ դրա արդյունավետությունն ու կիրառելիությունը ուսումնասիրման փուլում

[20] Հարցազրույց ՀՀ ԱԺ ութերորդ գումարման պատգամավորի հետ (30.05.2025):

[21] Հարցազրույց ՀՀ ԱԺ ութերորդ գումարման պատգամավորի հետ (05.06.2025):

[22] Հարցազրույց ՀՀ ԱԺ ութերորդ գումարման պատգամավորի հետ (05.06.2025):

[23] Հարզացրույց փորձագետի հետ (30.05.2025):

[24] Հարցազրույց ՀՀ ԱԺ ութերորդ գումարման պատգամավորի հետ (19.06.2025):

են: Այնուամենայնիվ, նմանատիպ նպատակային ֆինանսական աջակցությունը, ինչը ենթադրում է լրացուցիչ գումարային հոսքեր կուսակցությունների ներսում գենդերազգայուն ծրագրերի մշակման ու կանանց առաջխաղացմանը նպաստման դիմաց, իհարկե, երկարաժամկետ կտրվածքով կարող է խթան հանդիսանալ ինչպես կանանց ներկուսակցական դիրքերում ամրապնդվելու, այնպես էլ քաղաքական կուսակցությունների կողմից գենդերազգայունության մշակույթը և արժեքներ ձեւավորելու համար կրելը: Հետևաբար, կարևոր է այս միջոցի կիրառելիությունը տեղայնացնելու, ճանաչելիությունն ու արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված ուսումնասիրություններն ու մոդելներ մշակելու ուղղությամբ աշխատանքների համար ներդնել միջոցներ ու պահել այն հանրային ու քաղհասարակության ուշադրության կենտրոնում:

7. Եզրակացություն

Հետազոտությունում ուսումնասիրված կանանց քաղաքական առաջխաղացմանը նպաստող երեք հատուկ ժամանակավոր միջոցների՝ օրենսդրական գենդերային քվոտայի, կուսակցությունների ներսում գործող կամավոր քվոտաների և պետական նպատակային ֆինանսավորման ազդեցությունն ու կիրառելիությունը կարելի է դիտարկել ոչ միայն առանձին-առանձին, այլև միմյանց փոխլրացնող և համապարփակ գենդերային քաղաքականության հետ փոխկապակցվածության շրջանակում:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենսդրական քվոտան նպաստել է քաղաքականության մեջ կանանց ներկայացվածության աճին : Նման համակարգերում հաճախ ձևավորվում է բնականոն դինամիկա՝ կանանց ներգրավվածության աստիճանական աճով, անկախ քվոտայի շեմից: Հետևաբար, օրենսդրական քվոտայի պահպանումը և հնարավոր բարձրացումը կարող են խթանել գենդերազգայուն քաղաքական դաշտի ձևավորմանը:

Կուսակցությունների ներսում գործող կամավոր քվոտաները կարող են սկզբում ընկալվել որպես զուտ ներկուսակցական մեխանիզմ, սակայն դրանց հետևողական և տևական կիրառումը կարող է նպաստել ոչ միայն ներբուսակցական վերափոխումներին, այլև կանանց որակական առաջխաղացմանը ամբողջ քաղաքական համակարգում: Այս միջոցը կարող է փոխլրացնել օրենսդրական քվոտաները և նպաստել ընդհանուր գենդերազգայուն քաղաքական մշակույթի ձևավորմանը:

Պետական ֆինանսական աջակցությունը՝ ուղղված կուսակցությունների ներսում կին քաղաքական գործիչների առաջխաղացմանը, դեռ նոր ու քիչ կիրառված գործիք է Հայաստանում: Այնուամենայնիվ, նմանատիպ նպատակային ֆինանսավորումը, որն ուղղվում է գենդերազգայուն ծրագրերի մշակմանն ու կանանց ներգրավվածության խթանմանը, կարող է ունենալ զգալի խրախուսող ազդեցություն՝ հատկապես երկարաժամկետ կտրվածքով:

Այս երեք հատուկ միջոցները փոխկապակցված և փոխլրացնող կերպով կարող են ուժեղացնել միմյանց՝

- պետական ֆինանսավորումը կարող է խթանել կամավոր քվոտաների ներդրումը,
- կամավոր քվոտաները՝ նպաստել կանանց ընդգրկմանը ղեկավար մարմիններում,
- իսկ այդ ընդգրկվածությունը՝ նպաստել օրենսդրական քվոտաների կայուն կիրառմանը և կանանց ներկայացվածության ամրապնդմանը:

Ուսումնասիրության արդյունքները ևս մեկ անգամ ընդգծում են, որ այս հատուկ միջոցները պետք է դիտարկվեն ոչ թե

մեկուսացված, այլ որպես համապարփակ գենդերային քաղաքականության բաղադրիչներ: Այդպիսի քաղաքականությունը պետք է ներառի կրթական, սոցիալական, ինստիտուցիոնալ և տեղեկատվական տարրեր՝ ապահովելով ոչ միայն կանանց թվաքանակի աճ, այլև մասնակցության որակական զարգացում:

Բացի այդ, առանձնահատուկ կարևորություն ունի քաղաքական և կուսակցական մշակույթի վրա տարվող աշխատանքը: Ուսումնասիրության ընթացքում թե՛ քաղաքական գործիչները, թե՛ փորձագետները միակարծիք են եղել, որ առանց ներկուսակցական մշակույթի վերափոխման հնարավոր չէ համակարգային փոփոխություն ապահովել: Կուսակցությունների կողմից գենդերազգայունության ընկալումը որպես հիմնարար արժեք կարող է խորապես ազդել ինչպես նրանց ներքին կառուցվածքի, այնպես էլ հանրային քաղաքական օրակարգի վրա:

Ամփոփելով՝

- անհրաժեշտ է շարունակել և զարգացնել կիրառվող հատուկ ժամանակավոր միջոցները,
- դրանք կապել և ներդնել համապարփակ գենդերային ռազմավարությունների և քաղաքականությունների շրջանակում,
- խթանել կուսակցությունների ներսում գենդերազգայուն մշակույթի ձևավորումը,
- ապահովել շարունակական հանրային իրազեկում, կրթություն և ինստիտուցիոնալ աշխատանք:

Այսպիսի համակարգային մոտեցմամբ հնարավոր կլինի ոչ միայն ամրապնդել ժամանակավոր միջոցների արդյունավետությունը, այլև երկարաժամկետ հեռանկարում ապահովել կանանց հավասար և լիարժեք ներգրավվածությունը քաղաքական կյանքում:

8. Գրականության ցանկ

Միջազգային փաստաթղթեր և նորմատիվ իրավական ակտեր

1. ՄԱԿ: (1979). *Կանանց նկատմամբ բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա*:
2. ՀՀ Ազգային ժողով: (2002). *Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք*:
3. ՀՀ Ազգային ժողով: (2016). *Կուսակցությունների մասին ՀՀ սահմանադրական օրենք*:
4. ՀՀ Սահմանադրություն: (1995, փոփոխություններով՝ 2015):
5. ՀՀ Ազգային ժողով: (1999). *ՀՀ Ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենք*:
6. ՀՀ Ազգային ժողով: (2016). *ՀՀ Ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենք*:
7. ՀՀ Ազգային ժողով: (2013). *Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին ՀՀ օրենք*:

ՀԱՅԵՐԵՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1.Ականատես դիտորդական առաքելություն: Կուսակցությունների ֆինանսավորմանն առնչվող հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, 2019թ.https://transparency.am/hy/publication/pdf/177/1265

2. Անվտանգային քաղաքականության հետազոտման կենտրոն: Հայաստանում կուսակցությունների հանրային ֆինանսավորումը, 2024 թ. https://rcsp.am/entry/5537/hayastanum-kusakcutyunneri-hanrayin-finansavorumy/

3. Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թթ. ռազմավարություն և միջոցառումների ծրագիր

4. Հետք. հետաքննող լրագրողներ ինտերնետային թերթ: Ավագանիների կազմում ընդգրկված կանայք շարունակաբար հրաժարվում են մանդատներից, 2023 թ. https://hetq.am/hy/article/158857

5. ՕքսԵՋեն հիմնադրամ: Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանում. քաղաքականության համառոտագիր, 2024 թ., 21 էջ https://oxygen.org.am/wp-content/uploads/2024/11/Policy-Brief_to-Support_Women-_Political_Participation_Nov-2022-Final-Arm.pdf

6. ՕքսԵՋեն հիմնադրամ: Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանի Հանրապետությունում, 2020 թ., 40 էջ https://oxygen.org.am/wp-content/uploads/2021/03/Women-PP_Arm.pdf

ԱՆԳԼԵՐԵՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. ACE Electoral Knowledge Network. (n.d.). *Political finance: Political party and candidate access*. Retrieved July 2025, from https://aceproject.org/ace-en/topics/pc/pca/pca03/pca03b/default

2. Council of Europe Roma and Travellers Team. (2018, March). *Women and political representation: The case of Roma and Traveller women* (Report, Sixth International Roma Women Conference, Strasbourg, 6–7 November 2017). Council of Europe. Retrieved July 2025, from https://rm.coe.int/presentations-for-the-6-international-roma-women-conference-/16807645a5

3. Equal Future Eurasia. (n.d.). *Women's representation in politics and public administration: Armenia*. Retrieved July 2025, from https://www.equalfuture-eurasia.org/womens-representation-in-politics-and-public-administration/armenia

4. European Institute for Gender Equality. (n.d.). *Thesaurus entry: Gender quotas*. Retrieved July 2025, from https://eige.europa.eu/publications-resources/thesaurus/terms/1304?language_content_entity=en

5. European Parliament. (2023). *Towards gender balance in the European elections: Electoral quotas – What can they achieve?* (Briefing, European Elections 2024, 12 pp.). https://www.europarl.europa.eu/RegData/etudes/BRIE/2023/751447/EPRS_BRI(2023)751447_EN.pdf

6. European Parliament. (2024). *Women in politics in the EU: State of play in 2024* (12 pp.). https://www.europarl.europa.eu/RegData/etudes/BRIE/2024/760348/EPRS_BRI(2024)760348_EN.pdf

7. European Public Accountability Mechanisms. (n.d.). *About*. EuroPAM. Retrieved July 2025, from https://europam.eu/?module=about

8. GADC. (2023). *Achieving gender equality in political party financing in Albania* (21 pp.). https://www.gadc.org.al/media/files/upload/Gender%20equality%20in%20political%20party%20financing_Final.pdf

9. Gender Quota Portal. (n.d.). *Gender quota portal*. Retrieved July 2025, from https://genderquota.org/

10. Hassett, J. (2024, October 1). *Summer in the field: Implementing political gender quotas: Lessons from Mexico*. Boston University Global Development Policy Center. https://www.bu.edu/gdp/2024/10/01/implementing-political-gender-quotas-lessons-from-mexico/

11. International IDEA. (n.d.). *Gender quotas database*. Retrieved July 2025, from https://www.idea.int/data-tools/data/gender-quotas-

database/quotas
12. Ohman, M. (2018). *Gender-targeted public funding for political parties: A comparative analysis* (98 pp.). International IDEA. https://www.idea.int/publications/catalogue/gender-targeted-public-funding-political-parties-comparative-analysis?lang=en
13. Rappler. (n.d.). *Zipper system: How to get more women elected*. Retrieved July 2025, from https://www.rappler.com/philippines/elections/129938-zipper-system-get-more-women-elected-congress/
14. Statista. (n.d.). *Global population from 2000 to 2023, by gender*. Retrieved July 2025, from https://www.statista.com/statistics/1328107/global-population-gender/
15. UN Gender Quota Portal. (n.d.). *Quota analysis*. Retrieved July 2025, from https://genderquota.org/quota-analysis
16. UN Women. (2024, March 28). *The crucial role of legal frameworks in advancing gender equality* [Infographic]. UN Women. https://www.unwomen.org/sites/default/files/2024-03/infographic-the-crucial-role-of-legal-frameworks-in-advancing-gender-equality-en.pdf

10. Հեղինակի մասին

Կարինե Քոչարյանը հանդիսանում է Հայաստանի Եվրոպական համալսարանի Իրավագիտության ֆակուլտետի 5-րդ հեռակա կուրսի ուսանող: Աշխատում է ՀՀ Ազգային ժողովում: «Հոդված 3» ակումբի Մարդու իրավուքների դպրոցի 2023 թ. շրջանավարտ է:
Գիտական հետաքրքությունների ոլորտներ՝ մարդու իրավունքներ, սահմանադրական իրավունք, եվրոպական իրավունք:

freiheit.org